ԾՐԱԳԻՐ
GRECO-ի գնահատող խմբի կողմից Հայաստանին ներկայացված երաշխավորությունների
կատարումն ապահովող միջոցառումների

NN	ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ	ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ
1.	Հակակոռուպցիոն նախաձեռնություններն ու ծրագրերն առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է, որ Հայաստանի իշխանությունները ուսումնասիրություններ կատարեն, կոռուպցիայի և դրա զանազան դրսևորումների ավելի պարզ պատկերը ստանալու համար	Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով	1.Միջազգային փորձի ուսումնասիրում 2.Մոնիտորինգի անցկացում	պարբերաբար պարբերաբար
2.	Անհրաժեշտ է, որ հակակոռուպցիոն քաղաքականության/գործունեության մեջ ներգրավված Հայաստանի բոլոր իրավասու մարմիններն ու պաշտոնատար անձինք պարբերաբար տեղեկացնեն հանրությանը, քաղաքացիական հասարակությանը և լրատվամիջոցներին, ձեռնարկված միջոցառումների և ստացված արդյունքների մասին: Առաջարկվում է նաև, որ հանրությունը տեղեկացված լինի կոռուպցիայի վերաբերյալ կասկածները հայտնելու ուղիների մասին	Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով, Բոլոր գերատեսչություններ, իրավապահ մարմիններ	1. Պարբերաբար մամուլի և տեղեկատվության այլ աղբյուրների միջոցով հանրությանը ներկայացնել նշված ոլորտներում տիրող իրավիճակը և ձեռնարկված միջոցառումների արդյունքների մասին: 2. Համապատասխան ուղեցույցի մշակում	պարբերաբար 2006թ. ընթացքում
3.	Գործադիր իշխանության հետ հարաբերություններում դատավորների լիակատար անկախությունն ամրապնդելու համար վերանայել դատական համակարգի կազմակերպման վերաբերյալ օրենսդրությունը	Արդարադատության նախարարություն, Դատարանների նախագահների խորհուրդ	Դատական օրենսգրքի մշակում և ՀՀ կառավարությանը ներկայացում	2006թ. ընթացքում
4.	Ընդունել ոստիկանության ծառայողների, դատախազների և դատավորների կոռուպցիայի և փողերի լվացման հարցերին նվիրված պարբերական վերապատրաստման մոդել	Կենտրոնական բանկ Ոստիկանություն, Ազգային	1.Միջազգային փոձի ուսումնասիրում	2006թ. ընթացքում

		անվտանգության ծառայություն, Գլխավոր դատախազություն, Արդարադատության նախարարություն, ՀՀ Դատարանների նախագահների խորհուրդ	2.Համապատասխան մոդելի մշակում և ներդրում	2007թ. հունիս
5.	Անհրաժեշտ է, որ Հայաստանի իշխանությունները ռազիոնալացնեն հետաքննչական մարմինների հակակոռուպցիոն աշխատանքը՝ հստակ սահմանելով նրանց պարտականությունները, առաջին հերթին ոստիկանության և դատախազության միջև կոռուպցիոն հանցագործությունների քննության նախնական փուլում առավել արդյունավետ համագործակցություն հաստատելու համար	Արդարադատության նախարարություն, Ոստիկանություն, Գլխավոր դատախազություն	1. Միջազգային փոձի ուսումնասիրում 2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծերի մշակում և ՀՀ կառավարությանը ներկայացում 3.«Դատախազության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում:	2006թ. ընթացքում 2006թ. ընթացքում 2007թ. հունիս
6.	Փոփոխություն կատարել բանկային գաղտնիքի մասին օրենսդրության մեջ՝ հնարավորություն տալով իրավապահ մարմիններին նախքան մեղադրանք առաջադրելը ձեռք բերել հաշվետերերի և բանկային հաշիվների գործողությունների մասին պատշաճ տեղեկատվություն	Կենտրոնական բանկ, Գլխավոր դատախազություն	«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունների և լրացումների մշակում և ՀՀ կառավարությանը ներկայացում	2006թ. ընթացքում
7.	Վերանայել «Բանկային գաղտնիքի մասին» օրենքը, որպեսզի կանխվի բանկերի կողմից իրենց հաճախորդների վերաբերող դատական հարցումների մասին նրանց (հաճախորդների) իրազեկումը	Կենտրոնական բանկ	«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների և լրացումների օրենքի նախագծի մշակում	2006թ. ընթացքում

8.	Իրավապահ համակարգը գործնականում ավելի արդյունավետ աշխատելու համար ընդունել օրենսդրական ակտեր և իրականացնել այլ միջոցառումներ՝ հետաքննության հատուկ միջոցների արդյունավետ համակարգ ներդնելու համար և ապահովել իրավասու գերատեսչություններին համապատասխան միջոցներով և դասընթացներով	Արդարադատության նախարարություն, Ոստիկանություն, Գլխավոր դատախազություն, հետաքննություն իրականացնող մարմիններ	1. «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունում 2.ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունների մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը	մինչև 2006թ. վերջ մինչև 2007թ. հունիս
9.	Ձևավորել համապատասխան օրենսդրական դաշտ՝ ապահովելու համար վկաների պաշտպանության ծրագիրը գործնականում կիրառումը	Արդարադատության նախարարություն, Ոստիկանություն, Գլխավոր դատախազություն	1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունների մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը 2.Այլ իրավական ակտերի ընդունում	2006թ. հուլիս 2007թ. հունիս
10.	Նվազեցնել քրեական հետապնդումից անձեռնմխելի անձանց կատեգորիաները և վերացնել հատկապես պատգամավորության թեկնածուների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի, մարզային և տեղական ընտրական հանձնաժողովների անդամների, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների անձեռնմխելիությունը	Արդարադատության նախարարություն Կենտրոնական ընտրական հանձնաժողով,	ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխությունների մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը	2007թ. հունիս
11.	Վերանայել դատախազների և դատավորների անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգերը՝ նվազեցնելով վերադաս անհատական որոշում կայացնողների(Հանրապետության Նախագահ, գլխավոր դատախազ) մասնակցությունը	Արդարադատության նախարարություն, Դատարանների նախագահների խորհուրդ, Գլխավոր դատախազություն	1. Դատական օրենսգրքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը 2. Դատախազության մասին ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը	2006թ. ընթացքում 2007թ. հունիս
12.	Սահմանել իրավական դրույթներ, որոնք թույլ կտան. 1) բռնագրավել կոռուպցիոն իրավախախտումներով ստացված եկամտին համարժեք գույք. 2) իրականացնել երրորդ անձի տիրապետման տակ գտնվող գույքի արդյունավետ բռնագրավում	Արդարադատության նախարարություն, Դատարանների նախագահների խորհուրդ,	1. Քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածում փոփոխությունների մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը	2006թ. վերջ

		Գլխավոր դատախազություն	2.Համապատասխան իրավական ակտի ընդունում 3.Միջազգային փորձի ուսումնասիրում	2007թ. հունիս 2006թ. ընթացքում
13.	Պարզեցնել (և արագացնել) խուզարկության թույլտվության ընթացակարգը անմիջական անհետաձգելիության դեպքերում	Արդարադատության նախարարություն Գլխավոր դատախազություն Ոստիկանություն	1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225, 239, 241 , 280 , 281 հոդվածներում փոփոխությունների մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը 2.«Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդունում	2006թ. ընթացքում 2006թ. վերջ
14.	Ապահովել, որ փողերի լվացման դեմ պայքարի համար նոր ստեղծված համակարգը հնարավորինս շուտ դառնա գործունակ և արագ ապահովել ՖՀՄ-ի աշխատակազմի համար վերապատրաստման դասընթացներ, թե ինչպես ներդնել նոր, ներառյալ կասկածելի փոխանցումների վերաբերյալ հաղորդում ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերող կանոններն ու կանոնակարգերը առավել արդյունավետ ձևով	Կենտրոնական բանկ	Միջոցառումների ցանկը հաստատվել է ԿԲ խորհրդի 2006թ. մարտի 28-ի նիստում:	2006թ. վերջ
15.	Սահմանել բոլոր կարգի պետական պաշտոնյաների համար կանոններ, որոնք անհրաժեշտ են կիրառել այնպիսի դեպքերում, երբ անձնական/ֆինանսական շահերն ու գործունեությունը կարող են առաջ բերել շահերի բախում կամ կողմնապահություն՝ կապված պետական պաշտոնյաների պարտականությունների և պատասխանատվությունների հետ: Նաև առաջարկվում է քննարկել ռոտացիայի ավելի ընդարձակ կիրառման հնարավորությունը հանրային ծառայության այն ոլորտներում, որտեղ հատկապես նախապայմաններ կան կոռուպցիոն ռիսկերի համար	Քաղաքացիական ծառայության խորհուրդ, այլ ծառայություններ	1. Ուսումնասիրության անցկացում և անհրաժեշտության դեպքում առանձին ծառայությունները կարգավորող օրենքներում փոփոխությունների կատարում, կամ նոր օրենսդրական ակտերի ընդունում 2. Ենթաօրենսդրական ակտերի ընդունում	2007թ. հունիս 2007թ. հունիս

16.	Ներդնել բոլոր այն պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի ստուգման արդյունավետ համակարգ, ում ծառայողական պարտականությունները կարող են լինել շահերի բախման ազդեցության տակ	Հարկային պետական ծառայություն	1. «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի ընդունում: 2. Հայտարարագրերի տեղեկությունների արժանահավատության ստուգումն ապահովող օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը:	2006թ. սեպտեմբեր 2007թ. հունիս
17.	Քաղաքացիական ծառայողների, աշխատողների կամ այլ պաշտոնյաների կողմից ստացված նվերների արժեքն իջեցնել այնպիսի մակարդակի, որոնք կաշառքի կամ այլ անօրինական օգուտների վերաբերյալ կասկածներ չեն առաջացնի և նախատեսել ցանկացած արժեքի նվերի մասին հաշվետվություն տալու պարտականություն	Արդարադատության նախարարություն, Քաղաքացիական ծառայության խորհուրդ	1. Միջազգային փորձի ուսումնասիրում 2. Համապատասխան իրավական ակտի ընդունում:	2006թ. ընթացքում մինչև .2007թ. հունիս
18.	Առաջնահերթ համարել պետական ծառայության համար նախապատրաստվող էթիկայի կանոնների նախապատրաստումը և ապահովել, որ պետական բոլոր պաշտոնյաներն այդ ուղղությամբ անցնեն համապատասխան վերապատրաստում և որ այդ կանոնները հասանելի լինեն հանրությանը	Քաղաքացիական ծառայության խորհուրդ, այլ ծառայություններ	Ուսումնասիրության անցկացում և անհրաժեշտության դեպքում Առանձին ծառայությունները կարգավորող օրենքներում փոփոխությունների կատարում, կամ նոր օրենսդրական ակտերի ընդունում	2007թ. հունիս
19.	Ներդնել հստակ կանոններ (ընթացակարգեր) և պետական պաշտոնյաների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, որպեսզի նրանք հայտնեն իրենց պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած կոռուպցիայի դեպքերի կամ դրանց կասկածների մասին, և սահմանել համապատասխան պաշտպանություն պետական այն պաշտոնյաների համար, որոնք բարեխղճորեն հայտնում են կոռուպցիոն դեպքերի մասին	Քաղաքացիական ծառայության խորհուրդ, այլ ծառայություններ	Պետական ծառայողների կողմից կոռուպցիայի դեպքերի կասկածների վերաբերյալ հայտնելու պարտականության մասին լրացում կատարել պետական ծառայության տարբեր տեսակները կարգավորող ՀՀ օրենքներում, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում	2007թ. հունիս
20.	Պարբերաբար կենտրոնացված կարգով հավաքել և գնահատել այն տեղեկատվությունը, որը վերաբերում է պետական ծառայությունում էթիկայի կանոնների	Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման	Մշակել համապատասխան մոդել	2006թ. հունիս

	խախտումների մասին բողոքներին, ինչպես նաև կարգապահական վարույթների արդյունքներին, որպեսզի բացահայտվեն պետական ծառայության կոնկրետ ոլորտներում առկա թերությունները և այդ գնահատման հիման վրա քայլեր ձեռնարկել անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելու համար	մոնիտորինգի հանձնաժողով, բոլոր ծառայություններ		
21.	Ապահովել, որ ընկերություններ հիմնադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք ստուգվեն և վերահսկվեն՝ պարզելու համար նրանց հնարավոր դատվածության կամ մասնագիտական որակազրկման առկայությունը	Արդարադատության նախարարություն, Ոստիկանություն	1. Միջազգային փորձի ուսումնասիրում 2. Համապատասխան իրավական ակտի ընդունում, ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը	2006թ. 2007թ. սեպտեմբեր
22.	Սահմանել պատասխանատվություն իրավաբանական անձանց համար կաշառակերության և փողերի լվացման իրավախախտումների համար և սահմանել այնպիսի պատիժներ, որոնք արդյունավետ, համարժեք և համահունչ կլինեն Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիային	Արդարադատության նախարարություն,	1.Միջազգային փորձի ուսումնասիրում 2. Համապատասխան իրավական ակտի ընդունում, ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը	2006թ. ընթացքում 2007թ. սեպտեմբեր
23.	Ներդնել ընթացակարգեր և կազմակերպել հատուկ ուսումնական դասընթացներ հարկային ծառայողների համար՝ կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու վերաբերյալ	Հարկային պետական ծառայություն	1. «Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու կարգը» հաստատելու մասին ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի հրաման: 2. Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու վերաբերյալ հարկային ծառայողների հատուկ ուսումնական դասընթացների կազմակերպում:	մինչև 2007թ. հունիս մինչև 2007թ. ընթացքում՝ պարբերաբար
24.	Հայաստանի իշխանությունները պետք է քաջալերեն	Ֆինանսների և	1. Միջազգային փորձի ուսումնասիրում	մինչև 2006թ.

	աուդիտորական ներկայացուցչական մարմիններին ընդունելու կանոններ և կազմակերպելու դասընթացներ կոռուպցիայի փաստերի հայտնաբերման և դրանց մասին հաղորդելու վերաբերյալ	էկոնոմիկայի նախարարություն, Աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի հետ համատեղ	2. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը և դրանից բխող այլ իրավական ակտերի մշակում 3. Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու մարմիններին հայտնելու վերաբերյալ աուդիտորների ուսումնական դասընթացների կազմակերպում	վերջ մինչև 2007թ. հունիս մինչև 2007թ. հունիս

Ծանոթ. Յուրաքանչյուր կետում նշված պատասխանատուներից առաջինը նախապատրաստում և շրջանառության մեջ է դնում օրենքների և իրավական ակտերի նախագծերը